

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Ըստ նկարի՝ հյուսիսային կիսագնդում տարվա ո՞ր եղանակն է համապատասխանում 4-րդ պատկերին.

- 1) ձմեռը
- 2) գարունը
- 3) ամառը
- 4) աշունը



2

Եթե քարտեզի թվային մասշտաբը 1 : 100 000 է, նշանակում է, որ իրական չափերը փոքրացված են.

- 1) տասն անգամ
- 2) հարյուր անգամ
- 3) հազար անգամ
- 4) հարյուր հազար անգամ

3

Քարտեզում երկու կետերի հեռավորությունը 16 սմ է, իսկ իրականում՝ 4800 կմ: Այդ քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1 : 30 000 000
- 2) 1 : 16 000 000
- 3) 1 : 32 000 000
- 4) 1 : 76 800 000

4

Երկրի օրական պտույտի հետևանք է.

- 1) մագնիսական բևեռների տեղափոխությունը
- 2) պասսատների առաջացումը
- 3) մուսսոնների առաջացումը
- 4) ժամերի տարբերությունը

5

Օդի ամենաբարձր ջերմաստիճանն անամպ օրերին լինում է.

- 1) արևածագից անմիջապես հետո
- 2) կեսօրին
- 3) կեսօրից 2–3 ժամ հետո
- 4) արևամուտից անմիջապես առաջ

6

Կլիմա ձևավորող գործոններից չեն (չէ).

- 1) մթնոլորտային ճնշումը
- 2) ծովային հոսանքները
- 3) գերիշխող քամիները
- 4) աշխարհագրական լայնությունը

7

Հյուսիսային բևեռային շրջագծի վրա բևեռային ցերեկ լինում է.

- 1) ձմեռային արևակայության օրը
- 2) գարնանային գիշերահավասարի օրը
- 3) ամառային արևակայության օրը
- 4) աշնանային գիշերահավասարի օրը

8


Երևան քաղաքում տարվա ընթացքում ըստ ամիսների ստացվել են միջին ամսական հետևյալ ջերմաստիճանները. $-4,8^{\circ}$, $-1,3^{\circ}$, $+5,4^{\circ}$, $+11,8^{\circ}$, $+17^{\circ}$, $+21,1^{\circ}$, $+24,7^{\circ}$, $+24,9^{\circ}$, $+20,1^{\circ}$, $+13,5^{\circ}$, $+6,2^{\circ}$, $-0,9^{\circ}$: Ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը կլինի.

- 1) $19,9^{\circ}$
- 2) $25,6^{\circ}$
- 3) $29,6^{\circ}$
- 4) $29,7^{\circ}$

9

Քարտեզում կլիմայական ո՞ր գոտին է նշված 1 թվով.


- 1) մերձարևադարձային
- 2) հասարակածային
- 3) մերձհասարակածային
- 4) արևադարձային



10

Ի՞նչ է պատկերված նկարում.

- 1) անտիցիկլոն հարավային կիսագնդում
- 2) ցիկլոն հյուսիսային կիսագնդում
- 3) ցիկլոն հարավային կիսագնդում
- 4) անտիցիկլոն հյուսիսային կիսագնդում



11

«Ծով – կղզի» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Օխոտի ծով – Սախալին կղզի
- 2) Արաբական ծով – Շրի Լանկա կղզի
- 3) Կարիբյան ծով – Նյուֆաունդլենդ կղզի
- 4) Ադրիատիկ ծով – Կորսիկա կղզի

12

Հյուսիսից հարավ շարժվելիս բարեխառն գոտու անտառների զոնան փոխվում է անտառատափաստանների, որովհետև.

- 1) հողերը ճահճանում են
- 2) ռելիեֆն աստիճանաբար դառնում է ավելի բարձրադիր
- 3) ձմեռները դառնում են խստաշունչ
- 4) փոխվում է ջերմության և խոնավության քանակը

13

Բնութագրումով որոշել կլիմայական գոտին.

Այս կլիմայական գոտում ամբողջ տարին իշխում է չոր ու սառն օդային զանգվածը: Խիստ ցածր ջերմաստիճանների պատճառով տեղումները մշտապես լինում են ձյան տեսքով, որը չի հալվում կարճ և ցուրտ ամառվա ընթացքում: Ո՞ր կլիմայական գոտին է.

- 1) մերձարևադարձային
- 2) արկտիկական
- 3) բարեխառն
- 4) մերձարկտիկական

14

Եվրասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Արևմտասիբիրական և Թուրանի դաշտավայրերի հիմքում ընկած են հնագույն պլատֆորմներ:
- 2) Երկրակեղևի բարձրացումները հատկապես բնորոշ են գեոսինկլինալներին:
- 3) Գործող հրաբխային շրջանները և սեյսմիկ գոտիները համընկնում են:
- 4) Մայրցամաքի միջին բարձրությունը 840 մ է:

15

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Յուրաքանչյուր ժամային գոտուց արևելք ընկած գոտու ժամանակը 1 ժամով առաջ է նախորդից:
- 2) Արեգակի ճառագայթները նույն լայնության վրա տարվա ընթացքում միշտ նույն անկյան տակ են ընկնում:
- 3) Երկիրն Արեգակի շուրջը պտտվում է շրջանաձև ուղեծրով:
- 4) Մարտի 21-ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հարավային արևադարձի վրա:

16

«Հարթավայր – դրա տարածքով հոսող գետ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Կենտրոնական հարթավայրեր – Մակենզի
- 2) Մեծ ավազան սարահարթ – Յուկոն
- 3) Մեծ Հարթավայրեր – Միսսուրի
- 4) Լավրենտյան սարահարթ – Կոլորադո

17

«Գետ – ծոց» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Կուպերս կրիկ – Մեծ Ավստրալական
- 2) Կոլորադո – Մեքսիկական
- 3) Լուար – Բիսկայան
- 4) Ինդոս – Օմանի

18

«Գետ – վտակներ» գույգերից ո՞րն է սխալ.

- 1) Գանգես – Բրահմապուտրա, Ինդոս
- 2) Շատ-Էլ-Արաբ – Եփրատ, Տիգրիս
- 3) Վոլգա – Օկա, Կամա
- 4) Կուր – Արաքս, Ախուրյան

19

Ո՞ր պնդումն է ճիշտ.

Եթե հակումն արևմտյան է, ապա իսկական ազիմուտը որոշելիս պետք է.

- 1) մագնիսական ազիմուտը բազմապատկել մագնիսական հակումով
- 2) մագնիսական ազիմուտին գումարել մագնիսական հակումը
- 3) մագնիսական ազիմուտը բաժանել մագնիսական հակումի վրա
- 4) մագնիսական ազիմուտից հանել մագնիսական հակումը

20

Քաղաքն արևելյան երկայնության 57⁰-ի վրա է: Ո՞ր ժամային գոտում է այն.

- 1) 3-րդ
- 2) 2-րդ
- 3) 4-րդ
- 4) 5-րդ

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հասարակածային լայնություններում գերիշխում է մթնոլորտային բարձր ճնշման մարզը:
- 2) Օդի ջերմաստիճանի բարձրացումից մթնոլորտային ճնշումը բարձրանում է:
- 3) Մթնոլորտի կազմում թթվածնի քանակը գերազանցում է ազոտի քանակին:
- 4) Օդը տաքանում է Երկրի մակերևույթից ստացած ջերմության հաշվին:

22

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Անդերի բարձրլեռնային մարգագետինները տեղացիներն անվանում են պարամոս:
- 2) Խաղաղ օվկիանոսի ազդեցությունը Հարավային Ամերիկայի կլիմայի ձևավորման վրա սահմանափակվում է արևմտյան առափնյա շրջաններով:
- 3) Հարավային Ամերիկայի արևադարձային գոտու արևելյան մասն ամբողջությամբ զբաղեցնում է անապատների և կիսաանապատների զոնան:
- 4) Ակոնկագուան արևմտյան կիսագնդի ամենաբարձր լեռնագագաթն է:

23


Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն են Աֆրիկայում.

- 1) Նուբիական սարահարթ, Կամերուն հրաբուխ, Ռուդոլֆ լիճ
- 2) Պադանի դաշտավայր, Վինսոն լեռ, Իսիկ Կուլ լիճ
- 3) Լա Պլատայի դաշտավայր, Օրիսաբա հրաբուխ, Էրի լիճ
- 4) Լավրենտյան սարահարթ, Կոտոպախի հրաբուխ, Մեծ արջի լիճ

24

Քարտեզում *Բ* տառով *n* ր նեղուցն է նշված.

- 1) Կերչի
- 2) Դարդանեղի
- 3) Ջիբրալթարի
- 4) Բոսֆորի



25

Քարտեզում *Է* տառով *n* ր մայրաքաղաքն է նշված.

- 1) Վիլնյուս
- 2) Տալլին
- 3) Կոպենհագեն
- 4) Ռիգա

26

Ժողովրդագրական անցման առաջին փուլին բնորոշ է բարձր ծնելիությունը: Այս փուլը համընկնում է.

- 1) ժողովրդագրական ճգնաժամին
- 2) երկրների զարգացման ագրարային փուլին
- 3) երկրների զարգացման հետարդյունաբերական փուլին
- 4) երկրների զարգացման արդյունաբերական փուլին

27

Քաղաքների աճի ու զարգացման գործընթացն՝ ի հաշիվ արվարձանների, կոչվում է.

- 1) տարաբնակեցում
- 2) ուրբանիզացում
- 3) կեղծ ուրբանիզացում
- 4) սուբուրբանիզացում

28

Բնութագրումով որոշել երկիրը.

Այս երկիրը Եվրոպայի արևելյան և Ասիայի հյուսիսային մասում է: Երկրի ավերը ողողվում են 3 օվկիանոսների պատկանող ծովերի ջրերով: Ըստ պետական կառուցվածքի՝ դաշնային պետություն է: Ո՞րն է այդ երկիրը.

- 1) Ուկրաինան
- 2) Կանադան
- 3) ԱՄՆ-ը
- 4) Ռուսաստանը

29

Երկրի բնակչության թիվը 18,6 մլն մարդ է, գյուղական բնակչության թիվը՝ 7,812 մլն: Ուրբանիզացման մակարդակը կլինի.

- 1) 58 %
- 2) 37,5 %
- 3) 52 %
- 4) 42 %

30

10 մլն-ից ավելի բնակչություն ունեն.

- 1) Լոնդոնը և Հոունը
- 2) Վաշինգտոնը և Անկարան
- 3) Մոսկվան և Մեխիկոն
- 4) Տոկիոն և Բեռլինը

31

«Պետություն – պետական կարգ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) Իրան – միապետություն
- 2) Թուրքիա – հանրապետություն
- 3) Օման – միապետություն
- 4) Իրաք – հանրապետություն

32

«Ժողովրդագրական ճգնաժամը» բնորոշ է.

- 1) Բրազիլիային և ԱՄՆ-ին
- 2) Չինաստանին և Թուրքիային
- 3) Գերմանիային և Ավստրիային
- 4) Հնդկաստանին և Իրանին

33

«Կեղծ ուրբանիզացիան» բնորոշ է.

- 1) Ավստրալիային և Օվկիանիային
- 2) Լատինական Ամերիկային
- 3) Արևմտյան Եվրոպային
- 4) Արևելյան Ասիային

34

Ո՞րը չի վերաբերում քիմիական արդյունաբերությանը.

- 1) սինթեզում, ստեղծում է այնպիսի նյութեր, որոնք բնության մեջ չեն հանդիպում
- 2) ունի կոմբինացման մեծ հնարավորություններ
- 3) ունի հումքային ընդարձակ բազա
- 4) բնապահպանական տեսակետից համարվում է անվտանգ ճյուղ

35

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Լատինական Ամերիկայի երկրների արտահանման մեջ գերակշռում է մեքենաշինական արտադրանքը:
- 2) Արևմտյան Եվրոպայի երկրների արդյունաբերության համախառն արտադրանքի կառուցվածքում մեծ է արդյունահանող ճյուղերի բաժինը:
- 3) Թեթև արդյունաբերության ձեռնարկությունները տեղաբաշխվում են աշխատանքային ռեսուրսների կենտրոնացման վայրերում:
- 4) Սարքաշինության տեղաբաշխման վրա առավել մեծ է հումքային ռեսուրսների ազդեցությունը:

36

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոնը Մանչեսթր քաղաքն է:
- 2) Տնտեսությունը զարգացման հետարդյունաբերական փուլում է:
- 3) Սև և գունավոր մետաղաձուլությունը կենտրոնացված է նավահանգստային քաղաքներում:
- 4) Խոշոր քաղաքներից են Լիվերպուլը և Լիոնը:

37

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Եվրոպական երկրներում թռչնաբուծությունը զարգանում է արդյունաբերական եղանակով:
- 2) Խոշոր եղջերավոր անասնապահությունն ապահովում է մսի համաշխարհային արտադրության 3/4-ը:
- 3) Խոզաբուծությունը մերձքաղաքային տնտեսության մասնագիտացման ճյուղերից է:
- 4) Ձկան որսով աշխարհում առաջատարը Չինաստանն է:

38

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ավտոմոբիլային տրանսպորտի դերը հատկապես մեծանում է կարճ տարածությունների վրա բեռներ փոխադրելիս:
- 2) Զարգացող երկրների տրանսպորտային ցանցի խտությունը բարձր է:
- 3) Համաշխարհային տրանսպորտային բեռնաշրջանառության մեջ առաջատար դերը պատկանում է երկաթուղային տրանսպորտին:
- 4) Ծովային տրանսպորտի բեռնաշրջանառության մեջ առաջատար դերը պատկանում է Հնդկական օվկիանոսին:

39

Տրված երկրներից ո՞րն է առավել սակավ անտառապատ.

- 1) Կանադա
- 2) Իրան
- 3) Ինդոնեզիա
- 4) Ռուսաստան

40

Թուրքիային սահմանակից են.

- 1) Օմանը և Ռուսաստանը
- 2) Իսրայելը և Իրանը
- 3) Սիրիան և Հունաստանը
- 4) Մաուրիտան Արաբիան և Վրաստանը

41

Իտալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հարուստ է սնդիկի և ծծմբի պաշարներով:
- 2) Արևմտյան ափերը ողողում են Ադրիատիկ ծովի ջրերը:
- 3) Մակերևույթը հիմնականում հարթավայրային է:
- 4) Երկրի կազմում են Սիցիլիա և Կորսիկա կղզիները:

42

Բնութագրումով որոշել երկիրը.

Այս երկիրն իր տարածքով և բնակչության թվով դասվում է աշխարհի գերխոշոր երկրների շարքին: Արևելքում ավերը ողողվում են Ատլանտյան օվկիանոսի ջրերով: Այն հարուստ է գրեթե բոլոր տեսակի օգտակար հանածոներով, սակայն անբավարար են վառելիքաէներգետիկ ռեսուրսները: Ո՞րն է այդ երկիրը.

- 1) Արգենտինան
- 2) ԱՄՆ-ը
- 3) Մեքսիկան
- 4) Բրազիլիան

43

Ո՞ր շարքի լեռնագագաթներն են դասավորված բարձրությունների նվազման կարգով.

- 1) Քաջքար, Կապուտջուղ, Աժդահակ
- 2) Սրմանց, Թոնդրակ, Սիփան
- 3) Առնոս, Նեմրութ, Ջիլո
- 4) Նեմրութ, Արագած, Մարութա

44

«Գետ – վտակ» զույգերից ընտրել սխալը.

- 1) Ճորոխ – Օլթի
- 2) Կուր – Դեբեդ
- 3) Արևելյան Եփրատ – Բագրևանդ
- 4) Արաքս – Թարթառ

45

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Արաքս գետի հովտում հայտնի են Կարնո և Երզնկայի դաշտերը:
- 2) Հայկական հրաբխային բարձրավանդակի հարավային մասի արևմուտքում է Բյուրակն լեռնազանգվածը:
- 3) Արդահանի և Ախալքալաքի սարավանդները Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասում են:
- 4) Արևմտյան Եփրատի միջլեռնային գոգավորություններից նշանավոր են Ալաշկերտի, Մշո, Խարբերդի դաշտերը:

46

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ-ում մինչև 1963 թվականն ամբողջ էլեկտրաէներգիան արտադրվում էր ջրաէլեկտրակայաններում:
- 2) ՀՀ-ում ներկայումս փոքր գետերի վրա նոր ջրէկներ են կառուցվում:
- 3) ՀՀ էլեկտրահաշվեկշիռը բացասական է:
- 4) ՀՀ հզորությամբ 4-րդ էլեկտրակայանը Արգելի ջրէկն է:

47

ՀՀ շինանյութերի արդյունաբերության զարգացմանն առավելապես նպաստել է.

- 1) որակյալ աշխատուժի առկայությունը
- 2) տրանսպորտաաշխարհագրական նպաստավոր դիրքը
- 3) հումքի մեծածավալ առկայությունը և պահանջարկը
- 4) անթափոն արտադրության կազմակերպումը

48

Ո՞ր լանդշաֆտն է գերակշռում Շիրակի մարզում.

- 1) լեռնատափաստանային
- 2) կիսաանապատային
- 3) անտառային
- 4) ալպյան և մերձալպյան

49

Ո՞ր գետը չի հոսում Արագածոտնի մարզի տարածքով.

- 1) Գեղարոտ
- 2) Ամբերդ
- 3) Քասաղ
- 4) Մեծամոր

50

Արմավիրի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնակչության խտությունն արևելքից արևմուտք շարժվելիս նվազում է:
- 2) ՀՀ առավել խտաբնակ մարզերից է:
- 3) Մեծ է գյուղական բնակչության տեսակարար կշիռը:
- 4) Մարզկենտրոնը մարզի ամենամեծ քաղաքն է:

51 Քարտեզում Աղստև գետը ո՞ր տառով է նշված.

- 1) Գ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Դ



52 Քարտեզում Ստեփանավան քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Ը
- 2) Ե
- 3) Զ
- 4) Է

53 «Օգտակար հանածո – հանքավայր» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) քարածուխ – Ապալաչներ
- 2) բնական գազ – Կորդիլիերներ
- 3) երկաթ – Հավայան կղզիներ
- 4) գունավոր մետաղներ – Վերին լճի շրջակայք

54

Բուսական ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառում չէ:

- 1) գերխոնավ հողերի ցամաքեցումը
- 2) հատուկ պահպանվող տարածքների ստեղծումը
- 3) արհեստական անտառների ստեղծումը
- 4) «Կարմիր գրքի» ստեղծումը

55

Այն օրգանիզմները, որոնք քայքայում են օրգանական մնացորդները, սնվում դրանցով և օրգանական նյութերը վերափոխում անօրգանականի, կոչվում են.

- 1) պրոդուցենտներ
- 2) ռեդուցենտներ
- 3) կոնսումենտներ
- 4) պեստիցիդներ

56

Գրել Ամերիկա աշխարհամասի ավերը ողողող ծովածոցերի համարները.

- | | |
|---------------|----------------------|
| 1) Լա Պլատայի | 5) Օմանի |
| 2) Բենգալական | 6) Բիսկայան |
| 3) Հուդզոնի | 7) Ալյասկայի |
| 4) Գվինեական | 8) Սուրբ Լավրենտիոսի |

57

Գրել այն կենդանատեսակների համարները, որոնք հիմնականում տարածված են Հյուսիսային Ամերիկայում.

- | | |
|--------------|----------------|
| 1) կոնդոր | 5) կենգուրու |
| 2) բիզոն | 6) կարիբու |
| 3) բադակտուց | 7) ցեցե |
| 4) եքիդնա | 8) էմու ջայլամ |

58

Տրված են աշխարհի նշանավոր գետեր: Գրել անձրևային սնում ունեցող գետերի համարները.

- | | |
|--------------|------------|
| 1) Կոլումբիա | 5) Մակենզի |
| 2) Օրինոկո | 6) Օբ |
| 3) Սիրդարյա | 7) Պարանա |
| 4) Կոնգո | 8) Մեկոնգ |

59

Գրել այն երկրների համարները, որոնք բնակչության թվով գերիսցանոք չեն.

- | | |
|-------------|--------------|
| 1) Կանադա | 5) Ճապոնիա |
| 2) Ֆրանսիա | 6) Բանգլադեշ |
| 3) Բրազիլիա | 7) Ինդոնեզիա |
| 4) ԱՄՆ | 8) Պակիստան |

60

Գրել այն ջրեկների համարները, որոնք չեն մտնում Հրազդանի կասկադի մեջ.

- | | |
|-------------|------------|
| 1) Երևանի | 5) Արզնիի |
| 2) Քանաքեռի | 6) Այրումի |
| 3) Տաթևի | 7) Սևանի |
| 4) Արզելի | 8) Շամբի |

61

Գրել մոլիբդենի հանքանյութի արդյունահանման կենտրոնների համարները.

- | | |
|-------------|-----------|
| 1) Քաջարան | 5) Սոթք |
| 2) Կապան | 6) Ագարակ |
| 3) Շամլուղ | 7) Արարատ |
| 4) Ալավերդի | 8) Ախթալա |

62

Արևմտյան Եվրոպայի տրված պետությունները դասավորել ըստ արևմուտքից արևելք հաջորդականության.

- 1) Շվեյցարիա
- 2) Լիխտենշտայն
- 3) Ֆրանսիա
- 4) Ավստրիա

63

Կուրի ավազանին պատկանող ՀՀ տրված գետերի համարները դասավորել դրանց ջրառատության աճման կարգով.

- 1) Աղստև
- 2) Դեբեդ
- 3) Տավուշ

64

Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հվ. լ. 52°30' և արլ. ե. 23°30':
Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22-ի կեսօրին:

(65-66) Նավը հս. լ. 21° 30' և արլ. ե. 47°-ի վրա է: Որոշել նրա հեռավորությունը (կմ-ով).

65

Հյուսիսային բևեռային շրջագծից:

66

Հարավային արևադարձից:

(67-68) Քաղաքի բնակչության թիվը 76 000 է, բնակչության բացարձակ բնական աճը՝ 620 մարդ: Եկաճների թիվը 1630 մարդ է, մեկնաճների թիվը՝ 770 մարդ.

67 Որոշել միգրացիայի մնացորդը:

68 Որոշել քաղաքի բնակչության թիվը 1 տարի հետո:

69

Մթնոլորտի ջերմային պայմանների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Ներքնոլորտում յուրաքանչյուր մեկ կիլոմետր իջնելիս օդի ջերմաստիճանը նվազում է 5°-6°-ով:
- 2) Օդի տարեկան միջին ջերմաստիճանը որոշում են տարվա ընթացքում առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությամբ:
- 3) Ձմռան ամիսներին, երբ Արեգակը հորիզոնի նկատմամբ ամենաբարձր դիրքում է, և ցերեկները կարճ են, Երկրի մակերևույթը քիչ ջերմություն է ստանում:
- 4) Օրվա ընթացքում առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությունը կոչվում է ջերմաստիճանի տատանման օրական լայնույթ:
- 5) Ամենուրեք օդի ամենացածր ջերմաստիճանը անամպ օրերին լինում է արևածագի պահին:
- 6) Օդի ջերմաստիճանի տարեկան տատանումները հիմնականում կախված են տվյալ վայրի աշխարհագրական լայնությունից:

70

ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) 60-ից բարձր տարիք ունեցողները կազմում են բնակչության շուրջ 6 %-ը:
- 2) Բնակչության ընդհանուր թվում կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին:
- 3) Ամենանոսր բնակեցվածը Վայոց ձորի մարզն է:
- 4) Բնակչության միջին խտությունն ամենաբարձրն է մինչև 1000 մ բարձրության գոտում:
- 5) Բնակչության բնական աճը կազմում է մոտ 9 ‰:
- 6) Թվաքանակով երկրորդ ազգը ռուսներն են: